

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ

### Ա. Է. ԶՐԲԱՇՅԱՆ

Հայկական ռոմանտիզմն իր առաջին ամբողջական դրսևորումը գտավ Խաչատուր Աբովյանի ստեղծագործության մեջ, որը նշանավորեց հայ նոր գրականության սկզբնավորումը: Հանդես գալով հայ ժողովրդի համար մի այնպիսի դժվար և բախտորոշ ժամանակաշրջանում, ինչպիսին XIX դարի 30—40-ական թվականներն էին, երբ արևելահայությունն արդեն թոթափել էր պարսկական լուծը և տարված էր քաղաքական նոր հեռանկարների հույսով, Աբովյանն իր լուսավորական ծրագրերով և գործունեությամբ ցանկանում էր ուղի հարթել իր ժողովրդի համար, վերականգնել նրա կորած հոգեվոր և նյութական արժեքները: Աբովյանի գրական ժառանգությունը նույնպես կոչված էր ծառայելու այդ նպատակին և «երտորեն կապված էր նրա լուսավորական գործունեության հետ: Սակայն լուսավորական հայացքները Աբովյանի ստեղծագործության մեջ միաձուլվեցին ռոմանտիկական աշխարհընկալման հետ, որի մեջ էլ դրսևորվեց նրա ռոմանտիզմի յուրահատուկ օրակր:

Զստրկանալով անցյալի ավանդույթներին, Աբովյանը հանդես եկավ իրև գրական մեծ նորարար: Նրա ժառանգությունն իր թեմատիկայով և ժանրային բազմազանությամբ արտակարգ լայն է և համապարփակ: Հիմք դնելով հայ նոր գրականությանը, Աբովյանը միևնույն ժամանակ իր ստեղծագործությամբ կանխորոշեց նրա զարգացման թեմատիկ-բովանդակային, լեզվական ու ժանրային հեռանկարները: Վճռական քայլեր կատարելով գրականության ձևի և բովանդակության դեմոկրատացման ուղղությամբ, Աբովյանը դարձավ ստեղծողը և առաջին կիրառողը պատմվածքի, ակնարկի, շափածո առակի, խրատական զրույցի, քնարական և երգիծական պոեմի, քառյակի, մանկական բանաստեղծության և, վերջապես, մի այնպիսի մեծածավալ ժանրի, ինչպիսին ազգային-պատմական վեպն է: Նա փորձեր է կատարել գրական բոլոր սեռերում և գրեթե բոլոր ժանրերում՝ դրսևորելով թեմատիկայի ու ձևերի լայնություն և բազմազանություն: Սիրային, խոհական բանաստեղծություն՝ գրված մե՛րթ դասական, մե՛րթ աշուղական պոեզիայի սկզբունքներով, հայրենասիրական, կրոնական ներբող, քնարական պոեմ, սատիրապոեմ, բայաթի, զրույց, շափածո առակ, մանկավարժական վեպ, ակնարկ, պատմվածք, օրագիր, ուղեգրություն, դրամա վեպ, — ահա Աբովյանի կիրառած ժանրերի ոչ լրիվ թվարկումը, որից կարելի է պատկերացում կազմել նրա գրական հետաքրքրությունների արտակարգ լայն շրջանակների մասին:

Խաչատուր Աբովյանը մեր իրականության մեջ առաջինն էր, որ գրականությունը դարձրեց գրողի յուրօրինակ խոստովանության ձև, ամենօրյա արումները, տեսածն ու լսածը թղթին հանձնելու և ուրիշներին էլ դրանց հետ ծանոթացնելու միջոց: Այդ է նաև պատճառը, որ նրա գրական ժառանգության մի զգալի մասը կազմում են ուղեգրություններն ու օրագրերը, որոնք

կրականության այսօրինակ ըմբռնման արդյունք էին: Իր գեղարվեստական երկերում նույնպես գրողը երբեք չի մնում պասիվ արվեստագետի դիրքերում, այդտեղ հաճախ մուտք են գործում բարոյական քարոզն ու հրապարակախոսությունը, ակնարկային տարրերն ու փիլիսոփայական դատողությունները, անձնական ապրումներն ու սեփական կենսափորձի դասերը:

Այս տեսանկյունից էլ ահա պետք է գնահատել Աբովյանի բանաստեղծական ժառանգությունն ու նրա ժանրային բազմազանությունը: Ի տարբերություն նախորդ շրջանի հայկական պոեզիայի, Աբովյանը բանաստեղծության ժանրը դարձնում է յուրօրինակ շափածո օրագիր, որից մենք իմանում ենք նրա անձնական ապրումների, ամենօրյա խոհերի, զգացումների, հոգեկան թրթիռների մասին: Աբովյանը պոեզիայում առաջին պլան է մղում մարդու ողմանտիկական, հաճախ նաև սենտիմենտալ ապրումները, որոնց միջոցով էլ նա ընկալում է աշխարհը:

Սակայն և՛ թեմատիկ, և՛ ձևական ու ժանրային տեսակետից Աբովյանի բանաստեղծական ժառանգությունը միատարր երևույթ չէ: Նրա բանաստեղծությունները գրվել են աշակերտական նստարանից սկսած մինչև կյանքի վերջին տարիները՝ իրենց վրա կրելով հեղինակի ստեղծագործական ու գաղափարական որոնումների, նրա աշխարհայացքի զարգացման կնիքը: Ներսիսյան դպրոցում ուսանելու տարիներին և դրանից հետո գրված նրա մի շարք բանաստեղծությունների վրա զգալի է ժամանակի գերիշխող գրական ուղղության՝ կլասիցիզմի դրոշմը: Այդ ոտանավորներից շատերը իրենց թեմատիկայով և գաղափարաբանությամբ հիշեցնում են «Երախայրիք Ներսիսյան դպրոցի» ժողովածուն: Դրանք գրաբարով գրված ներբողական բանաստեղծություններ են՝ նվիրված որևէ բարձրաստիճան հոգևորականի կամ նշանակալի երևույթի, ուղերձներ և այլն: Սակայն նույնիսկ առաջին շրջանի կլասիցիստական ոտանավորներում արդեն հեղինակը շեղվում է այդ ժանրերի ավանդական ոճից ու ձևերից՝ իր գործերում ներմուծելով կենդանի, բանաստեղծական պատկերներ: Այստեղ որոշ շափով զգալի է դառնում նաև հեղինակային եսը, նրա ապրումների արձագանքը:

Նախադրյալատյան շրջանի աբովյանական պոեզիան չի մնում կրոնական թեմատիկայի և վերացական հայրենասիրության շրջանակներում: Այստեղ մենք արդեն կարող ենք տեսնել քաղաքական խոշոր իրադարձությունների անմիջական արձագանքները (ռուս-պարսկական պատերազմ, Արևելյան Հայաստանի ազատագրում և այլն): Այդպիսին են նրա «Խնդամիտ զգացմունք...» քաղաքական ներբողը, որտեղ բանաստեղծն արդեն դրսևորում է արևելահայության համար Ռուսաստանի պատմական դերի խոր և ճշմարտացի ըմբռնում, «Մուտ Հայկայ ի Հայաստան» դրամատիկական փոքրածավալ պոեմը, որտեղ հայերի նախահոր՝ Հայկի միջոցով բանաստեղծը փառաբանում է Ռուսիայի որդիներին, որոնք «ի հլսիսոյ՝ խաշազարդեալ՝ Եկին փրկել զաշխարհ, զազգ մեր»<sup>1</sup>: Այս գործում արդեն կլասիցիստական երկարաշունչ տողերի և խրթնաբանությունների փոխարեն Աբովյանը խոսում է պարզ, մատչելի գրաբարով, վերամբարձ դատողություններին փոխարինելու են գալիս կենդանի պատկերներն ու անխառն զգացումները:

Աբովյանի առաջին շրջանի բանաստեղծական ժառանգության ինքնատիպ և հետաքրքիր մասն են կազմում ուշ միջնադարի հայ տաղերգուների և աշուղակառն պոեզիայի նմանողությամբ գրված տաղերը: Դրանք բանաս-

<sup>1</sup> Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հատոր առաջին, Երևան, 1948, էջ 62: Այսուհետև այս հրատարակությունից կատարած մեջբերումների համապատասխան հատորը և էջը կնշվեն տեքստում:

տեղծութեան այնպիսի տեսակներ էին, որոնք նախատեսված էին երգելու համար. այդ է ահա պատճառը, որ Աբովյանն իր տաղերի վերնագրերում նշում է դրանց կատարման գույնը կամ եղանակը («Տաղ ուրախութեան ի գոյն Առաւօտեանին», «Տաղ ի գոյն Հրով սիրոյին», «Տաղ ի գոյն Ի սէր քո նազելոյն» և այլն), որոնք վերցված էին XVIII դարի հայ միջնադարյան մի շարք բանաստեղծների նշանավոր տաղերից (Պետրոս Ղափանցի, Պաղտասար Պպիր, Սիմեոն Երևանցի և ուրիշներ): Բնական է, որ Աբովյանը պետք է ինչ-որ չափով կրկներ այդ հեղինակների կիրառած տաղաչափական սկզբ-բունքները: Սակայն բանաստեղծը հնարավորին չափ ձգտել է ինքնատիպ լինել, տաղերի հայտնի կաղապարների մեջ վերարտադրել իր անձնական զգացումները, սիրո, կարոտի, վշտի ու տենչանքի պահերը.

**Կաթեղեօք արտասուաց՝ անդու հսկեցի՝ սէր պատուելի  
Արի՛ դու մի հեղգար առ իս վշտալի՛ մինչ եմ կենդանի.  
Ի մորմոք տխրութեան միշտ պլեկոծիմ համակ տատանիմ,  
Ի հողմոյ հեծութեան անոյս տարրերիմ՝ սուզիլ մերձանիմ,  
Ոչ լինի լսելի՛ զոր ինչ բարբառիմ և զոր սքանիմ,  
Ո՛վ խղճոյս՝ ձենտու՛ քեզ եթ կարօտիմ օգնել փափագիմ. (I,42):**

Այն, ինչ արժեքավոր է այս տաղերում, նախ և առաջ պոեզիայի աշխարհականացման, նրա բովանդակության դեմոկրատացման ցայտուն միտումն է, որը դրսևորվում է և՛ թեմատիկայով, և՛ աշուղական պոեզիայի մի շարք ձևական միջոցներով, և՛ գրաբար լեզվի պարզեցումով (այն երբեմն նմանվում է միջին հայերենին)<sup>2</sup>:

Աբովյանի դորպատյան շրջանի պոեզիան արդեն միանգամայն նոր բանաստեղծական որակ է նշանավորում: Այդ ժամանակ նա շատ է կարդում ու թարգմանում ռուս և եվրոպական բանաստեղծներին (Շիլլեր, Գյոթե, Կարամզին և ուրիշներ), և բնական է, որ ստեղծագործական ազդակներ է ըստանում նրանցից՝ միաձուլելով դրանք իր ինքնապիտան բանաստեղծական աշխարհին: Օրագրութեանը զուգահեռ, Աբովյանը նաև բանաստեղծութեամբ է վերարտադրում իր զգացումներն ու խոհերը: Պոետական լուրջ ու երկար խորհրդածութունների նյութ է դառնում ոչ միայն սիրելի ուսուցչի մահը («Սուգ ի վերայ մահուան սիրելոյն իմոյ եւ ուսուցչի Վալտերի»), այլև լճափին զբոսնող մի խումբ երիտասարդների հետ հանդիպումը («Պոսկոտեալ ամոք արև...»), կաղ աղջկա կամ պանդուխտ հայրենակցի նկատմամբ տածած ջերմ կարեկցանքը («Զի՛նչ այս դառն հարուած անգութ օրհասին...», «Զգացմունք ցավալից սրտից...»): Սակայն այս շրջանի նրա լավագույն գործերը ռոմանտիկական շնչով զրված սիրային բանաստեղծութուններն են, որոնց վրա զգալի է գերմանական ռոմանտիկ քնարերգութեան ազդեցությունը: Դրանք անձնական հույզերով, զգացմունքներով ու տենչերով տոգորված քերթվածքներ են, որտեղ սիրո բերկրանքին միահյուսված է հավերժական բաժանման թախիծը, այլազգի սիրուհու պարզևած հույզերին՝ հեռավոր հայրենիքին օգտակար լինելու տենչը: Սերը Աբովյանի մոտ ինքն իր մեջ ներփակված մի զգացում չէ. այն օգնում է բանաստեղծին ավելի խոր ընկալելու բնութիւնը, նորովի վերաիմաստավորելու մարդկային կյանքի էությունը.

**Թո՛ղ զիս դատեսցեն  
Դաճիճք դժոխոց  
Թո՛ղ զիս մատնեսցեն  
Նոքա դառնախոց.**

<sup>2</sup> Աբովյանի՝ նախադրապատյան շրջանում գրված այս տաղերի մասին ավելի մանրամասն տե՛ս, Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, Կյանքը, գործը, ժամանակը (1809—1838), Երևան, 1987, էջ 287—306:

Այլ ուր և հնչեացի այս անոշ քո ձայն  
Անդ է իմ դրախտ, երկիրք և կայան (I, 78):

30-ական թվականների երկրորդ կեսից սկսած (Գորպատից վերադառնալուց հետո) Աբովյանի պոեզիան դառնում է ավելի բազմաժանր, ընդլայնվում են և՛ թեմատիկ շրջանակները, և՛ բանաստեղծական ձևերը: Նրան կըրկին հուզում են հայրենիքի ներկայի ու ապագայի մասին մտածմունքները («Մուտ ի հայրենիս», «Մտածմունք ի տեսիլ հայրենեաց» և այլն), գրում է անձնական հույզերով տոգորված խոհական-փիլիսոփայական բնույթի գրաբար բանաստեղծություններ («Յունայնութիւն աշխարհի», «Նոր էր բացվել առաւօտեան...» և այլն), եղբրական տրամադրություններ և վշտալի խոհեր արտահայտող քերթվածքներ («Գրեցաւ ի վերայ դամբարանի բազմերախտ ուսուցչի իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարեան», «Առաջի պատկերի... Տրիդրիխայ Պարոտի...»), բնությանը նվիրված ոտանավորներ («Առաւօտ», «Ի վերայ արեգական» և այլն): Գրաբար բանաստեղծություններին զուգահեռ այս շրջանում Աբովյանն ավելի շատ է սկսում դիմել ժողովրդական կենդանի խոսքին: Հատկապես շատ է գրում ժողովրդական և աշուղական պոեզիայի հանգով ու ոճավորումով բանաստեղծություններ, որտեղ ժողովրդական բառ ու բանի միջոցով ստեղծված են կենդանի ու վառ պատկերներ, ապրումներ շոշափելի են ու ամբողջական:

Աբովյանը փորձեր է կատարել նաև երգիծական բանաստեղծության ժանրում՝ գրելով «Հախվերմագի գովքը» և «Աչքի լուս ջան, դարդ մի անիլ» գործերը, որտեղ երգիծվում են հասարակության համար վնասակար արատներն ու անձինք:

Աբովյանի պոեզիայի մի շատ ինքնատիպ մասն են կազմում նրա քառյակները, կամ, այսպես կոչված, բայաթիները, որոնք ստեղծված են ժողովրդական խաղերի ու երգերի ոճով և նմանությամբ: Իր բայաթիների մի մասը գետեղելով «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուում, Աբովյանը «Հառաջարանում» ասում է. «Բայաթիքը էն մտքով եմ գրել, որ շունքի մեջլըտում, հացի վրա թուրքեվար են էսպես բաներ ասում. լավ հայր հայեվար ասի, որ քիչ քիչ լեզուն քաղցրանա, շունքի ոչինչ բան լեզուն էնքան չի քաղցրացնիլ, որքան խաղ ու տաղը» (II, 189): Աբովյանն այստեղ նշում է իր բայաթիների միայն, այսպես կոչված, գործնական-կիրառական կողմը: Սակայն դրանք նաև գեղարվեստական որոշակի արժեք ներկայացնող գործեր են, որտեղ իշխում են մեղմ կարոտի, չվայելած սիրո, թախծի ու տխրության ժողովրդական երանգները՝ անհատական ընկալմամբ ու դրսևորմամբ: Իր գերմաններեն նամակներից մեկում Աբովյանը տալիս է «բայաթի» կոչվող քառյակի ժանրային բավական սեղմ և ամբողջական գնահատականը: Ըստ նրա, բայաթիներին «բնորոշ է վիշտը կամ բարոյախոսությունը և որոնց առաջին ու վերջին տողերի հանգերը հնչում են միատեսակ, ունենալով հանդերձ միանգամայն տարբեր իմաստ» (VII, 380): Ինքը՝ Աբովյանը իր քառյակներում կիրառել է այս սկզբունքը՝ ստեղծելով գեղարվեստական ինքնատիպ պատկերներ.

Սիրտս կաթել ա՛ արից,  
Քո մարմինն եմ, քո արից,  
Ե՛դ արի, մեկ աչքովդ տե՛ս,  
Թե սիրելուդ ի՛նչ արից (I, 187):

\* \* \*

Մնացել եմ մեկ էրում,  
Այս քաշելով իճճ սպանում  
Թե չես դարդիս վրա հասնիլ,

Բայց քնարական սեռի ոչ մի գործում, թերևս, այնքան ամբողջականորեն չդրսևորվեց Աբովյանի նոր՝ ռոմանտիկական աշխարհընկալումը, որքան պոեմի ժանրում: Լոմանտիզմը կլասիցիստական դյուցազններգության փոխարեն առաջ քաշեց նոր տիպի՝ լիրիկական պոեմի ժանրը, որտեղ գործողությունների էպիկական պատկերմանը փոխարինելու եկավ աշխարհի հուզական ընկալումը, պատմական հերոսների փոխարեն՝ մարդու հոգու, ներաշխարհի թաքուն ծալքերի: պատկերումը: Հայ նոր գրականության մեջ, կարելի է ասել, Աբովյանը եղավ առաջին ստեղծողը լիրիկական պոեմի ժանրի՝ հանձինս «Աղասու խաղը» մեծածավալ քերթվածքի: Թեպետ այս գործը աչքի չի ընկնում բանաստեղծական ինքնատիպ լուծումներով, հաճախ ձգձգված է և գեղարվեստորեն թերի, բայց, իբրև քնարական պոեմի առաջին փորձ, այն հետաքրքիր է և անկրկնելի: Բանասիրության մեջ իրավացիորեն հայտնվել է այն կարծիքը, որ «Աղասու խաղը» անավարտ պոեմը նշանավոր «Վերքի» մտահղացման առաջին մարմնավորումն է՝ շափածո ձևով, որտեղ շեշտը դրված է բացառապես Աղասու հոգեկան ապրումների, նրա սիրո, կարոտի, տառապանքի և այլ զգացումների վերարտադրման վրա: Ավելի քան 7000 տողից բաղկացած այս գործում գրեթե լիովին բացակայում է սյուժետային տարրը, ողջ պոեմը զարգանում է իբրև մի ներքին մենախոսություն: Եթե կան էլ գյուղական կյանքի, կենցաղի պատկերման որոշ երանգներ, ապա՝ սոսկ իբրև Աղասու վերհուշի, կարոտալի հիշողության դրսևորում: Աղասին ինքը՝ իր դատողություններով, խոհերով ու մտահոգություններով հաճախ նույնանում է հեղինակային եսի հետ՝ դառնալով նրա նվիրական զգացումների արտահայտիչը:

- Ա՛խ հողի, ջրի անումին մեռնիմ.
- Ա՛խ քաղցր ջրի անումին մեռնիմ.
- Ա՛խ քաղցր վաթանի սուրբ հողին մեռնիմ.
- Վաթանց դրախտիցն էլ քաղցր, անոջ ա.
- Վաթանց երկնքիցն դհա պատվական.
- Ա՛խ սուրբ վաթանի քաղցր հողին դուրբանց,
- Վաթանի ծուխը խունկ ա ու կնդրուկ.
- Վաթանի ջուրը գետ անմահական.
- Վաթանի հողը անգին ջավաճիր.
- Վաթանի քարը գոհար, մարգարիտ... (II, 188):

«Իրականում սրանք իմ զգացմունքներն են, որոնք ես վերագրել եմ Աղասուն», — հետագայում խոստովանել է Աբովյանը՝ անդրադառնալով այս գործին (VII, 392): Ե՛վ պոեմի կենդանի, խոսակցական լեզուն, և՛ աշուղական բանաստեղծության որոշ սկզբունքների օգտագործումը նշանակում էր մի քայլ ևս դեպի պոեզիայի ժողովրդական ակունքները, որոնք ավելի լայն շափով պետք է դրսևորվեին «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուում:

Աբովյանը դիմել է նաև երգիծական պոեմի ժանրին՝ գրելով «Հազարփեշները»: Այս գործը ուղղված է սոցիալական ու քաղաքական անարդարության դեմ: Ծաղրելով Կովկասում ծառայող ռուս շինովնիկին, Աբովյանը միաժամանակ արտահայտում է իր համակրանքը աշխատավոր, բնական կյանքով ապրող ասիացի մարդու նկատմամբ և բողոքում «քաղաքակիրթ աշխարհի» մարդկանց կամայական, բիրտ ու անհոգի վերաբերմունքի դեմ:

<sup>3</sup> Աբովյանի քայաթիների մասին տե՛ս, Պ. Հակոբյան, Խ. Աբովյանի «Բայաթիները», «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 56—70:

«Հազարփեշեն» պոեմը գրված է աշխարհաբար լեզվով՝ ժողովրդական երգի-  
ծանքի ու հումորի միջոցների լայն կիրառումով, քանի որ, ինչպես հեղի-  
նակն է նշում պոեմի առաջաբանում, «շատ մութը լեզվով գրիլ էնպես եմ  
կարծում, թե մեր խալխին դիր շի գալ» (I, 166): Այս գործը մի շատ ինք-  
նատիպ փորձ է երգիծական պոեմի ժանրի ասպարեզում և մեկ անգամ ևս  
վկայում է Արուվյանի գրական ու հասարակական արտակարգ լայն, համա-  
կողմանի հետաքրքրությունների մասին:

Քննելով Արուվյանի գեղարվեստական արձակը, մասնավորապես՝ պատմը-  
վածքները, առաջին հերթին աչքի է զարնում դրանց ընդգծված ուժանտի-  
կական բնույթը, որից և բխում է այդ գործերի ժանրային ընդհանուր նկա-  
րագիրը: Իր պատմվածքներում Արուվյանը դրել է մարդասիրության, մարդու  
բարոյական կատարելության, դասային և ազգային սահմանների վերացման  
ուժանտիկ գաղափարները, իր հերոսներին օժտել վեհ ու առաքինի գծերով:

Արուվյանի պատմվածքները ոչ միայն զուտ գեղարվեստական բնույթի  
գործեր են, այլև դրանցից շատերը մոտենում են ակնարկի ժանրին: Գեղար-  
վեստական, ակնարկային, խոհափիլիսոփայական, հրապարակախոսական  
տարրերը միավորվում են այդ գործերի մեջ՝ ստեղծելով ժանրային հետա-  
քրքիր մի համաձուլվածք: Այդպիսին են «Թուրքի աղջիկը», «Հունայնություն  
աշխարհի...», «Թիֆլիզու հայոց հանգստարանը», «Աշխարհիկ բարբառ երե-  
վանցի հայոց», «Բարեկամի մոտ» արձակ երկերը, որոնք հեղինակի անմի-  
ջական ապրումների, մտորումների արձագանքն են: Այդտեղ հաճախ են  
մուտք գործում ինքնակենսագրական երանգները, պատմողի կերպարը գրե-  
թե լիովին նույնանում է հեղինակի կերպարի հետ: Այս ակնարկ-պատմվածք-  
ներում Արուվյանը հրապարակախոսական և զգացմունքային շեշտերով շա-  
րադրում է իր լուսավորական հիմնական գաղափարները՝ բարի գործերով  
օգտակար լինել մարդկանց, լուսավորել ժողովրդին և ցույց տալ նրան կյան-  
քում ապրելու ճիշտ ուղիները: «Ա՛խ, ի՛նչպես քաղցր է աշխարհի երեսին  
լավություն անել» (IV, 35), — բացականչում է նա («Աշխարհիկ բարբառ...»),  
իսկ մի ուրիշ տեղ («Բարեկամի մոտ»)՝ դառնությունամբ խոսում նրանց մա-  
սին, ովքեր չեն ցանկանում լավ գործերով իրենցից հետո բարի անուն թող-  
նել. «Մարդ աշխարհ էնպես գա, էնպես գնա, որ մեկ բան չանի, նրա վարդն  
էլ ուրըշի աչքին փուշ թվա, իր արնակիցը նեղ օրումը տեսնի, մեկ քոմակ  
չանի, ի՛նչ մարդ, ի՛նչ կյանք... Հարիր օր ապրած, հարիր տարի, մեկ օրվա,  
մեկ սհաթի լավություն ա հիշվում» (IV, 39):

Արուվյանի պատմվածքներում երբեմն մուտք են գործում չափածո հատ-  
վածներ, լիրիկական կտորներ («Առաջին սեր», «Բարեկամի մոտ», «Հունայ-  
նություն աշխարհի»), որը գալիս է զգացմունքների արտակարգ մեծ, սեն-  
տիմենտալ պոռթկումից:

Այս արձակ գործերում հանդես բերված կերպարները որոշակիորեն կը-  
րում են ուժանտիկական միակողմանիության դրոշմը: Նրանք հոգեբանորեն  
վերլուծված չեն և դրսևորվում են միայն իրենց զգացմունքային ներաշխարհի  
միջոցով, որով էլ վերապրում են իրականությունը: Դրանք հաճախ բառի իս-  
կական իմաստով կերպարներ էլ չեն, այլ հեղինակային եսի, նրա հույզերի,  
մտքերի ու գաղափարների այլևայլ դրսևորումները: Այս պատմվածքների  
նույն՝ զգացմունքային ու բարոյախոսական ուղղվածությունից էլ բխում է մեկ  
այլ հատկանիշ ևս՝ իսկական սյուժեի, գործողության զարգացման բացակա-  
յությունը. դրանք հիմնականում կառուցված են հերոսների խորհրդածուխնե-  
րի, վերհուշի, հույզերի վրա: Սյուժետային տարրերով առավել չափով օժտ-  
ված է միայն «Առաջին սերը», որը Արուվյանի արձակ գործերի մեջ ամենից  
ավելի է մոտենում բուն իմաստով պատմվածքի ժանրին: Սակայն այստեղ

էլ սյուժեի զարգացման հիմնական ժանրութիւնն ընկած է հերոսների (հատկապես՝ Վանու) սենտիմենտալ ապրումների վերարտադրման վրա:

Արքովյանը գրել է նաև արձակ բանաստեղծութիւն հիշեցնող գրաբար գործեր («Մուտ գարնան», «Ամարային առաւօտն ի գիւղս», «Գիշերն ամարային»), որտեղ իշխում է քնարական տրամադրութիւնը, չկա որևէ սյուժետային տարր, հովվերգական գույներով պատկերվում է բնութիւնն այս կամ այն պահը՝ հուզականորեն իմաստավորված ու վերապրված մարդու կողմից:

Սակայն Արքովյանի տարբերքը, կարելի է ասել, բարոյախոսական բնույթի ժանրերն էին (առակ, զրույց, մանրավեպ), որոնց նա հատկապես նախապատմութիւն էր տալիս, իբրև մարդուն դաստիարակելու և դրա միջոցով էլ հասարակական կյանքը վերափոխելու ներգործուն միջոցներ: Իր «Նախաշավիղ կրթութեան ի պէտս նորավարժից» մանկավարժական աշխատութիւն մեջ նա զետեղել է բազմաթիւ խրատաբանական արձակ զրույցներ, ինչպես նաև շփածո առակներ, խրատական ոտանավորներ՝ բոլորն էլ հասցեագրված մատաղ սերնդին: Սրանց նպատակն է գեղարվեստական խոսքի միջոցով մանուկներին բարոյականութիւնն դասեր տալ, պարզաբանել, թե ո՞րն է բարին, ո՞րը՝ չարը:

Բարոյախոսական բնույթի նմանօրինակ գործեր Արքովյանը գրել է նաև մեծահասակների համար: Իր «Զվարճալի ու կարճ պատմութիւնք» խորագիրը կրող տետրակում նա զետեղել է օտար աղբյուրներից քաղված, ինչպես նաև հայկական միջավայրում տարածված զրույցներ, անեկդոտներ, մանրավեպեր, որտեղ պախարակվում են մարդկային ու հասարակական արատները: Սրանք բոլորն էլ հետաքրքրութիւնով կարդացվող, ուրախ, հաճախ նաև զավեշտական պատմութիւններ են, որոնց մեջ հեղինակը լայնորեն օգտվել է ժողովրդական խոսքի հարստութիւններից: Սրանց մի մասը իրենց ժանրային բնույթով պարզապես զրույցներ են («Որդիական սեր ու մեծասրտութիւն», «Կարլոս մեծի ջահելութիւն սերը», «Երագ» և այլն), մյուսները՝ կարճառոտ երգիծական պատմութիւններ կամ անեկդոտներ, որտեղ մարդկային արատները պախարակվում են երգիծելու, ծաղրելու միջոցով: Այս գործերն առանձին վերջրած շունեն լուրջ գեղարվեստական արժանիքներ, սակայն Արքովյանի նպատակը եղել է ստեղծել ընթերցանութիւն գիրք սովորական հայ մարդու համար, որը դարեր շարունակ զրկված է եղել մատչելի լեզվով և աշխարհիկ բովանդակութիւնով գրականութիւնից:

Այդ նպատակով է ստեղծված նաև Արքովյանի «Պարապ վախտի խաղալիք» հանրահայտ ժողովածուն: Այստեղ Արքովյանը զետեղել է ինչպես շփածո առակներ, զրույցներ, այնպես էլ՝ բայաթիներ, աշուղական հանգով գրված ոտանավորներ: Վերջինների մասին մենք արդեն խոսել ենք, ուստի կանգ առնենք միայն շփածո առակների ու առականման զրույցների վրա, որոնք էլ կազմում են ժողովածուի հիմնական դիմագիծը: Արքովյանին գրավել էր և՛ առակի ժանրի բարոյախրատական բնույթը, որը համապատասխանում էր նրա լուսավորական ուղիմտիքին, և՛ այն, որ այդ ժանրերը առավել տարածված ու սիրված էին ժողովրդի կողմից: Նա տարիներ շարունակ հավաքել ու գրի է առել «խալխի խոսացած բաները», շփածո ձևով մշակել է դրանք, հարստացրել իր սեփական կենսափորձով:

Բարոյախոսական բնույթի այս ժանրերի միջոցով հեղինակը պախարակում է շարք և հաստատում բարին, բողոքում իր շուրջը տիրող սոցիալական սուր անարդարութիւնների, կեղծիքի, ծուլութիւնն ու խաբելութիւնն դեմ: Ինչպես հատուկ է առհասարակ առակի ժանրին, Արքովյանը ևս այնտեղ ընդգրծում և առանձնացնում է դրանց բարոյախոսական մասը՝ դնելով այն կա՛մ առակի սկզբում, կա՛մ վերջում: Ահա դրանցից մի քանիսը.

Խորամանկ մարդիցն աստված ազատի

Խեղածինն քրա ո՛չ խերն, ո՛չ շառը,

Իր օրումն նրբեք չի պետք է ուզի (II, 201):

(«Մոլլա Մասրադնի պղծանք»)

«Վա՛յ էն հորնը մորն, որ որդի պահի,

Ու ո՛չ խրատ տա, ո՛չ էլ լավ կրթի»:— (II, 220)

(«Ձու զողացողը»)

Ով զոռ ունի, հենց անճարի դիւին

Է քացի տալիս, հանում աչքն, հոգին.

Իր արած մեղքն էլ քրա վզին դնում (II, 272):

(«Գեւն ու գառը»)

Աբովյանը փորձել է դասակարգման ենթարկել «Պարապ վախտի խաղալիքի» առակներն ու զրույցները՝ դրանք բաժանելով չորս խմբի: Հնդ որում՝ նա հստակորեն զանազանում է այն առակները, որտեղ գործող անձը անմիջականորեն մարդն է՝ դրանք միավորելով «Ասացվածք» խորագրի տակ և, այսպես կոչված, «Առասպելները», որտեղ գործում են բուսական ու կենդանական աշխարհի այլաբանական կերպարներ: Աբովյանը առանձնացրել է նաև ժողովրդական առակների գրական մշակումները թարգմանական ու փոխադրական առակներից<sup>4</sup>: «Ասացվածք» կոչվող գործերն իրենց ժանրային բնույթով ավելի մոտ են առականման զրույցին. այդպիսին է «Լոռցիք» շարքը, «Ջարմանալի մարդիքը», «Ճրագով ման գայը» և այլն, որտեղ բարոյախոսությունը բխում է բուն շարադրանքից: «Ջտարյուն» առակները, որոնք միավորված են «Առասպելք» խորագրի տակ, կենդանիների կամ բույսերի միջոցով այլաբանորեն են ցուցադրում հասարակական կյանքի արատները: Դրանց մի մասը հայկական կամ ընդհանուր արևելյան ծագում ունեցող ժողովրդական առակների մշակումներ են («Ֆորթն ու խոզը», «Էջն ու ձին», «Բարդին ու վագր» և այլն), մյուսները՝ թարգմանություններ կամ փոխադրություններ՝ հիմնականում ռուս առակագիրներից (Ի. Ա. Կոխով, Ի. Ի. Խեմնիցեր, Ի. Ի. Դմիտրիև և ուրիշներ): Թարգմանելիս Աբովյանը կատարել է որոշակի ընտրություն՝ վերցնելով հատկապես այն առակները, որոնց բովանդակությունը համապատասխանում էր իր լուսավորական ու դեմոկրատական հայացքներին: Այդպիսին են, օրինակ, «Խանը», «Կատուն ու մուկը», «Մառ», «Գեյն ու գառը», որտեղ հեղինակը պախարակում է հասարակության համար շարիք դարձած այնպիսի երևույթներ, ինչպես տգիտությունը, դաժանությունը, գողոզությունը ու շարակամությունը: Թարգմանվող նյութի հետ Աբովյանը վարվել է բավական ազատորեն՝ հարմարեցնելով այն հայ ժողովրդական մտածողությանը և լայնորեն օգտվելով ժողովրդական խոսքի նրբերանգներից: Ահա, օրինակ, Կոխովի մի առակից («Անցվորականքն ու շունը») կատարած թարգմանության բարոյախոսությունը, որը հնչում է միանգամայն հայացի.

Բերանը պատռած հաշվարա մարդի

Փեշակն է՛ն ա, որ մեզ վրա հաչի:

Բայց դու քո ճամփե՛ն՝ դուզ բռնի, դնա՛,

Կհաչի, կըհաչի, էլ եղ կդիճջունա (II, 265):

«Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն նշանավորեց Աբովյանի ստեղծագործության հետագա դեմոկրատացումը, գրականության ձևի և բովանդակության խոր ժողովրդայնությունը:

<sup>4</sup> «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի առակների ու զրույցների ժանրային տարբերակման մասին ավելի մանրամասն տե՛ս, Պ. Հակոբյան, Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք», ժողովածու, Լրաբեր հասարակ. գիտ., 1976, № 3, էջ 59—78:



Աբովյանի գրական ժառանգութեան մի շատ հետաքրքիր էջ է «Պատմութիւն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» մանկավարժական վեպը, որը նույնպէս կարելի է գասել խրատաբանական ժանրի թվին: Դատելով պատկերված միջավայրի բնույթից, հերոսների նկարագրից ու վարքագծից, «Պատմութիւն Տիգրանի» վեպը պետք է որ ռուս կամ եվրոպական համապատասխան մանկավարժական գործի ազատ փոխադրութիւնը լինի: Այստեղ առավել ամբողջականորեն է դրսևորվել Աբովյանի լուսավորական աշխարհայացքը: Նա բնութիւնը համարում է մարդու դաստիարակութեան ամենահիմնական դպրոցը, որից կարելի է շատ բան սովորել: Ահա թե ինչու այդ վեպում հանդես եկող ուսուցիչը՝ պարոն Կարապետը և նրա սաները հաճախ են դուրս գալիս զբոսանքի, զբաղվում հողագործութեամբ և միաժամանակ ծանոթանում բնութեան գաղտնիքներին: Այս վեպում որոշակիորեն զգացվում է մարդու բնական դաստիարակութեան ռուսոսոյական հայացքների արձագանքը (Աբովյանն իրոք հետաքրքրվել է Ռուսոյով, թարգմանել հատվածներ նրա «Նոր էլիզից»):

«Պատմութիւն Տիգրանի» մանկավարժական վեպն ունի շատ հետաքրքիր կառուցվածք: Քանի որ այն հիմնականում գրված է մանուկների լուսավորութեան և բարոյական դաստիարակութեան նպատակով, այստեղ խիստ շատ են խրատները և բարոյականութեան քարոզները, հեղինակը հաճախ է սյուժետային հիմնական գծի մեջ ներմտծում փոքրիկ նովելներ, առակներ, զրույցներ, պատմութիւններ՝ իբրև վեպի բաղկացուցիչ մասեր, բայց և՛ միանգամայն ինքնուրույն գործեր:

Աբովյանի գրական ժանրերի ամբողջական պատկերը տալու համար պետք է հիշատակել նաև նրա փորձերը դրամատուրգիայի բնագավառում: «Նախաշավիղ կրթութեան» աշխատութեան մեջ կա մի փոքր դրամատիկական հատված, որն Աբովյանը գրել է, ըստ երևույթին, դպրոցական բեմում ներկայացնելու համար: Այդ գործում, որ կոչվում է «Նաղարկութիւն մանկանց...», Աբովյանը խրատում է մանուկ սերնդին լինել ուսումնասեր, չբարկացնել ծնողներին, սիրել գրքերն ու դպրոցը.

Ո՛վ կասի՝ կարթալն անպետք ա մարդու.  
Կարթալով պետք է մեր աչք բացվի:  
Որ լավ իմանաք, ի՞նչ կա աշխարհքումս.  
Եվ ուրիշն երբեք մեզ ծաղր չանի (V, 110):

Աբովյանը փորձել է թարգմանել նաև գերմանացի դրամատուրգ Ավգուստ Կոցեբուի «Աղելախոյա ֆոն Վուլֆինգեն» և «Ճեղդորա կամ որդիական սեր» դրամաները:

Աբովյանի գրական նորարարութիւնը, սակայն, ոչ մի տեղ չդրսևորվեց այնպէս ցայտուն, ինչպէս վեպի ժանրում, որտեղ նա շուններ իր նախորդները: «Վերք Հայաստանի» վեպը դարձավ Աբովյանի ողջ ստեղծագործութեան յուրօրինակ հանրագումարը, որով նա նոր շունը տվեց մայրենի գրականութեանը: Դեռևս Դորպատում ուսանելու տարիներին Աբովյանը ծրագրում էր գրել «Աղասու պատմութիւնը», սակայն այդ գործի ժանրային բուն նկարագիրը կանխորոշված չէր: Երկարատև մտորումներից հետո Աբովյանը ի վերջո կանգ առավ վեպի ժանրի վրա, որով էլ ստեղծեց իր երկը: Ինչո՞վ էր այդ ժանրը համապատասխանում հեղինակի մտահղացումներին. նախ, իր գործում նա պատկերել է մի ամբողջ սլատմական ժամանակաշրջանի (XIX դարի առաջին քառորդի) դեպքերը, տվել հարազատ ժողովրդի կյանքի պատմութիւնն այդ ժամանակաշրջանում, իսկ դրա համար պարզ է, որ պետք էր էպիկական լայն կտավի գործ, որպիսին և դարձավ Աբովյանի ազգային-պատմական վեպը: Բացի այդ, «Վերքը» որոշակի քաղաքական ու լուսավոր-

րական ծրագրեր էր պարունակում՝ կապված հայ ժողովրդի ապագա կյանքի հետ՝ Ռուսաստանի տիրապետության օրոք: Աբովյանը ցանկանում էր իր ժողովրդին բերել ինքնաճանաչման, նրան (նաև օտարներին) ծանոթացնել իր ազգային պատմության հետ, ցույց տալ, թե որտեղի՞ց են եկել հայերը, ի՞նչ անցյալ, ի՞նչ ազգային հերոսներ, հոգևոր ու նյութական գանձեր են ունեցել և այդպիսով ոգևորել հայրենակիցներին՝ արթնացնելով նրանց մեջ ազգային արժանապատվության զգացումը: Բնական է, որ նման լայն ծրագրերի արժարժման խնդիրը առավել հաջողությամբ կարող էր իրագործել միայն վեպի ժանրը: Աբովյանի ծրագրերի մեջ պակաս կարևորություն չունեն անկանուսության թեմատիկայի և լեզվի դեմոկրատացման խնդիրը, որը նա դրեց և հաջողությամբ իրագործեց իր վեպում:

«Վերք Հայաստանին» Աբովյանի համար զուտ գեղարվեստական բնույթի վեպ չէր. այստեղ նա պատկերում է հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական ու բարոյական վերքերը, որոնք դարեր շարունակ ծանրացել էին իր հայրենի երկրի սրտին: Այդ վեպը միաժամանակ նաև ողբ էր Աղասու և նրա նման քաջերի զոհվելու համար, նրանց կատարած մեծ գործի փառաբանություն: Այդ պատաճոով էլ Աբովյանն իր երկը անվանել է «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի»: Դա նոր ժամանակների դյուցազնեղություն էր՝ ձոնված ազգային հերոսներին:

«Վերք Հայաստանի» վեպը, իրոք, մի անկրկնելի երևույթ է մեր գրականության մեջ, և անհնարին է միանշանակ բնութագիր տալ նրան: Այն իր մեջ ներառնում է պատմական և արդիական, արևելյան, աշուղային և եվրոպական, փիլիսոփայական վեպերի տարրեր: Ծիշտ է նկատել Դերենիկ Դեմիրճյանը, որ «իբրև եվրոպական ուժան՝ Աբովյանի այս երկը շատ է ծանրաբեռնված լիրիկական տարրերով, երգերով, իսկ իբրև արևելյան վիպասանություն՝ ընդհակառակը, նույնքան ծանրաբեռնված է դիդակտիկական լուսավորական խնդիրների լուսաբանություններով»<sup>5</sup>:

Անդրադառնալով իր երկին, Աբովյանն ինքը բացատրել է նրա բնույթը՝ համարելով այն ժողովրդական վեպ՝ գրված ժողովրդին հասկանալի լեզվով և ժանրային կառույցով: «Աղասուն ես անպայման ցանկանում էի մշակել իբրև ժողովրդական վեպ, — գրում է նա, — որպեսզի դրանով օտարներին ևս ծանոթացնեի ժամանակակից հայ ազգության հետ: Ինձ համար այնքան հիշարժան 1841 թվականի բարեկենդանին սկսեցի իմ պատմությունը այն ձևով, կարծես, մի հայ գյուղացի պատմելիս լինել իր հարևանին» (VII, 391): Այստեղից էլ, ահա, Աբովյանի ընտրած վիպական ձևը, պարզ, աշխարհաբար լեզուն, ժողովրդական մտածողությանը հարազատ նկարագրություններն ու դատողությունները:

Ինչ վերաբերում է «Վերք Հայաստանի» վեպի՝ պատմական, թե՛ արդիական լինելու խնդրին, ապա դրան նույնպես չի կարելի միանշանակ պատասխան տալ: Կասկածից վեր է, իհարկե, որ վեպը ունի պատմական բնույթ. Աբովյանն այդտեղ մարմնավորել է ռուս-պարսկական պատերազմի (1826—1827) և դրան նախորդած ժամանակաշրջանի նկարագիրը, որը 40-ական թթ. սկզբին արդեն պատմության գիրկն էր անցել, քանի որ երկրում փոխվել էր քաղաքական իրադրությունը: «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի առաջաբանում, խոսելով իր վեպի մասին, Աբովյանը նշում է, որ «նրանով կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարհի հալը» (II, 190): Բուն «Վերք Հայաստանի» վեպի շարադրանքում ևս կան հեղինակային որոշ շե-

<sup>5</sup> Գ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու վեց հատարով, հ. 8, լրացուցիչ, Երևան, 1963, էջ 223:

ղումներ, որոնցից պարզ է դառնում, որ Աբովյանը խորապես գիտակցել է իր վեպի պատմականությունը: Փառաբանելով ռուսական տիրապետությունը, «ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռք», Աբովյանը գրում է. «Քայց թե մինչև էս բախտին հասնիր ի՞նչ օր ենք քաշել, ի՞նչ թրեր ա նրանց լերդն ու թոքը կերել, ... ով ուզում ա իմանալ, հետս գա, գնա՛նք էլ ետ Երևան»<sup>6</sup>:

Սակայն վեպում պատկերվող ժամանակաշրջանը շատ հեռավոր անցյալ չէր Աբովյանի համար. թեպետ չկար արդեն հայ ժողովրդի գլխին կախված հիմնական շարիքը՝ պարսկական տիրապետությունը, սակայն բարոյական, հասարակական ու սոցիալական բնույթի շատ հարցեր դեռևս մնում էին չլուծված, չէին բուժված ժողովրդի դարավոր վերքերը: Ահա այս պատճառով էլ Աբովյանը պատմական վեպում բարձրացնում է իր ժամանակի համար խորապես արդիական ու հրատապ հարցեր: Պատմական թեման նրա համար սոսկ միջոց էր իրեն հուզող հարցերի, քաղաքական, լուսավորական ծրագրերի արծարծման համար: Իր գործը անվանելով «պատմական վեպ», Աբովյանն առաջին հերթին նկատի ունեւր նկարագրվող դեպքերի իրական-պատմական հավաստիությունը: Վիպասանը երբեք ամբողջովին չի տեղափոխվում պատմական անցյալ, այլ մշտապես զգացնել է տալիս իր ժամանակների շունչը: Այդ պատճառով նա հաճախ է դիմում իր ժամանակակիցներին, հատկապես՝ երիտասարդ սերնդին, որի հետ կապում է իր նվիրական հույսերը. «էրեխե՛ք, ձեր ջանին մեռնիմ, ձե՛զ եմ ասում իմ դարդը, ձեզ համար եմ գրում, ձեր երեսին ղուրբան...» (194): Նա ցանկանում է ղուրս բերել իր ժողովրդին ազգային թմրածությունից և ցույց տալ ապրելու ճիշտ ուղիները: Իր հայրենիքի դարավոր վերքերի պատկերումով նա երիտասարդ սերնդին մղում է ազգապահպանման մեծ գործին, սեր արթնացնում նրա մեջ դեպի իր ազգի լեզուն ու հավատը. «էսքան բաները լսեցիք, սի՛րելի կարդացող, բաս ի՞նչպես յի սիրտդ վառվիլ, որ դու է՛ն ազգի որդին ես, որ էսքան տանջանք քեզ համար քաշեց, ինքը նահատակվեց, քո կաթը ու արինդ ուրիշ ազգի հետ յխառնեց: էնպես կարծում ես քի՞չ բան ա, հազար տարով էս օրը քաշիլ, էլի ազգ պահիլ, որդի մեծացնիլ, անուն, լեզու հավատ ունենա՛լ: Ա՛խ, էս միտք անողը էլ ի՞նչ սիրտ պետք է ունենա, որ իր լեզուն, իր ազգը չսիրի» (126):

Հայ գրականագիտության մեջ բազմիցս նշվել է «Վերք Հայաստանի» վեպում իրականության վերարտադրման ռեալիստական և ռոմանտիկական սկզբունքների միաձուլման մասին: Սա գալիս է վեպի արտակարգ լայն, համակողմանի բնույթից, իրականության պատկերման մեծ ընդգրկումից: «Վերք Հայաստանի» վեպում իրոք կան հայ գյուղի կենցաղի ու բարքերի ռեալիստական պատկերներ, նկարագրվող ժամանակաշրջանի էական կողմերի ճշմարտացի վերարտադրություն: Վեպը գրելու ընթացքում (40-ական թթ. ըսկիզբ) Աբովյանն այցելել է Հայաստանի մի շարք գավառներ և տեղեկություններ հավաքել մարդկանցից այս կամ այն դեպքի, անձի կամ իրադարձության մասին: Նկարագրելով պատերազմական գործողությունները, Աբովյանն ամեն կերպ ցանկացել է նշել ճիշտ թվականը, ամիսը կամ օրը, հնարավորին չափ ստույգ տեղեկություններ հաղորդել պատմական անձանց մասին: Սակայն իրական պատկերների առկայությունը չպետք է խանգարի տեսնելու «Վերք Հայաստանի» վեպի հիմնական պաթոսը, որը ռոմանտիզմն է: Ավելին, «ռեալիզմն» այդ երկում հանդես է գալիս իբրև ռոմանտիկական աշխարհընկալման ձև, օբյեկտիվ իրականությունը՝ իբրև սուբյեկտիվ վերապրումների դրսևորման միջոց:

<sup>6</sup> Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1981, էջ 119: Այսուհետև «Վերքից» մեջբերումները կտանք ըստ այս հրատարակության՝ փակագծում նշելով էջը:

«Վերք Հայաստանի» վեպի ուղմանտիզմը առաջին հերթին երևան է գալիս այդ երկի խոր սուբյեկտիվության մեջ, հեղինակային եսը անվերջ և ամենուր պատկերվող իրադարձությունների անմիջական մասնակիցն է: Նա շարունակ միջամտում է, բարոյական քարոզներ կարդում ազգի զավակներին, փիլիսոփայորեն խորհրդածում աշխարհի, բնության, կյանքի, կրոնի, հայրենիքի մասին, դրսևորում իր ապրումները, հույզերը, ապսարեզ հանում ինքնակենսագրական որոշ դրվագներ: Լիրիկական, խոհական և այլ կարգի այս շեղումները օրգանապես կապվում են վիպական հյուսվածքի հետ և դրանով իսկ մեծ շահով որոշում երկի ժանրային դիմագիծը: Ողջ վեպն ունի շեշտված քնարական բնույթ, այն կարծես ամբողջովին հեղինակի մենախոսությունը լինի:

Վեպի կերպարները նույնպես ունեն ընդգծված ուղմանտիկական բնույթ, հաճախ սենտիմենտալ գունավորմամբ: Նրանց մասին հեղինակը ավելի շատ պատմում է, քան ներկայացնում բուն գործողության մեջ: Թեպետ այդ կերպարներից շատերը պատմական անձնավորություններ են և ունեն իրենց նախատիպը, սակայն նրանց մեջ հեղինակն ավելի շատ դնում է իր ապրումներն ու խոհերը: Դրանք չունեն ռեալիստական կերպարների հոգեբանական բարդությունները. Աբովյանի հերոսները բավական միակողմանի են և հիմնականում հանդիսանում են հեղինակային եսի այս կամ այն կողմի կրողը, նրա հայացքների ու գաղափարների արտահայտիչը: Ծվ հաճախ դժվար է լինում որոշել, թե որտե՞ղ է ավարտվում հեղինակային մենախոսությունը և որտե՞ղ սկսվում հերոսի խոսքը:

Այս հանգամանքը առավել շահով վերաբերում է Աղասու կերպարին, որին Արսեն Տերտերյանը իրավացիորեն բնութագրել է իբրև ուղմանտիկական գաղափարատիպ: Իրոք, Աղասին հեղինակային եսի երկվորյակն է, նրա գաղափարաբանության, ծրագրերի ու նպատակների կրողը: Այս իմաստով Աղասին Աբովյանի համար իրական, բայց և միաժամանակ իդեալական կերպար է, որի հետ նա կապվում է իր ամենամիտրական զգացումներով ու հույզերով: Աղասու կերպարի ուղմանտիկականությունը դրսևորվում է նրա խոր զգացմունքայնության, հերոսականության արտակարգ ու բացառիկ բնույթի մեջ: Նա վեր է կանգնած այն միջավայրից, որի ծնունդն է ինքը և հակադրվում է նրան՝ չարիքի դեմ ծառանալու իր պատրաստակամությամբ: Աղասու կերպարի ուղմանտիկական բացառիկության դրսևորման գագաթնակետը Հասան խանի հետ հանդիպման տեսարանն է: Այստեղ վերջինս երևում է իր ողջ ճղճիմությունը, իսկ Աղասին՝ հոգեկան վեհությունը ու բարձրությունը: «Դու էստեղ չի՞ պետք է սատկիս, հայակեր շո՞ւն,— դիմում է նա Հասան խանին,— իմ թուրն ափսո՞ս ա, որ քեզ պես թշվառ ճիճուն սպանի. չէ՞, ամոթ ա իմ տղամարդությանը, որ քեզ քարի տակի կամ չուլումն սատկացնեմ, որ ղշերը ջամդաբդ ուտեն, քարերն ու հողը քո մուռտառ արինդ ծծեն, ու լըսողը էնպես կարծի, թե կովումը մեռար... Ծանճը սպանիլ ի՞նչ տղամարդությունն ա» (184):

Աղասու արտաքինի, նրա քաջության ու հերոսականության նկարագրման մեջ առկա են հիպերբոլիզմի տարրեր, ժողովրդական էպոսից և առհասարակ ժողովրդական պատումի ձևերից եկող չափազանցություններ, որոնք և՛ գալիս են Աղասու ընդգծված բացառիկությունը պատկերելու ձգտումից, և՛ արդյունք են վեպի հիմական ժանրային բնույթի (ժողովրդական վեպ՝ գրված ժողովրդին հասկանալի լեզվով ու գեղարվեստական պատկերման միջոցներով):

Վեպի ուղմանտիկական բնույթից են գալիս նաև բնության պատկերման սկզբունքները: Աբովյանի մոտ բնությունը սոսկ արտաքին միջավայր չէ, 58

այն ամբողջովին մասնակցում է վեպում պատկերվող գործողություններին, ստեղծում որոշակի տրամադրություն ու հոգեվիճակ, արձագանքում հերոսների ճակատագրին. «Բոլոր տիեզերք, հորիզոնք երկնից, գագաթ լեռանց, սահանք բարձանց սկսեցին տապալիլ. թխպագին, արջնաթույր, սևաթև ամպն, ոռ բարձրացել էր, հասավ արեգակի մոտ ու արյան ծովի անս առաջ փոքր ժամանակ կարմրատակեցավ, ապա կուտակվելով, ծալվելով՝ էնպես այլագունեցավ, սևացավ, մինչև հեռու տեղից տեսնողք էն օրը էնպես էին կարծել, որ մեկ տեղ աշխարհ ա կործանվում...» (191):

«Վերք Հայաստանի» վեպը ունի շատ հնրնատիպ կառուցվածք, որը հատկանշվում է վիպական շարադրանքում մեծ քանակությամբ չափածո հատվածների ու երգերի ադկայությունը: Վեպի երգախառն բնույթը մի կողմից գալիս էր աշուղական, ժողովրդական պոեզիայի ավանդներից, մյուս կողմից՝ Աբովյանի ուժեղ զգացմունքայնության մասին, երբ հեղինակը, չկարողանալով իր հույզերի, խոհերի առատությունը պարփակել արձակ տողերում, ձգտում է չափածո խոսքի: Հաճախ դա ստացվում է կարծես հեղինակի կամքից անկախ, երբ զգացմունքների պոռթկումից արձակը դառնում է ութմեկի: Բայց հաճախ էլ Աբովյանը գիտակցաբար ընտրություն է կատարել՝ «Աղասու խաղից» հատվածներ տեղադրելով իր վեպում, որի նպատակը կրկին հուղականության ուժեղացումն է:

Չափածոն Աբովյանի համար նաև միջոց է վեպում արծարծած ազգային ու քաղաքական ծրագրերի վերաիմաստավորման համար.

Ա՛խ, մեր սիրտն էպես ընչի՞ հովացել,  
Արինը ցամաքել, մեր կուռը թուլացել.  
Շրաք կտեսնի՛մ, ա՛խ, ես մեկ օր էլ,  
Մեր սուրբ երկիրը թշնամուցն ազատիլ:

Էն ի՛նչ շունչ կլլի, որ էս նոր հոգին  
Փչի՛, վեր կացնի քնից մեր ազգին.  
Էն ի՛նչ շեռք կլլի, որ մեր աշխարքին  
Էլ ետ սիրտ տա ու կանգնեցնի կրկին (269):

«Վերք Հայաստանի» վեպը դարձավ այն հզոր ակունքը, որի հետ կապվեցին հայ նոր գրականության ստեղծած շատ արժեքներ: Նրանից ազդակներ ստացան ինչպես մեր ուժանտիկ գրողները (Պատկանյան, Բաֆֆի, Մուրացյան), այնպես էլ ռեալիստական ուղղության ներկայացուցիչները (Պոռչյան, Աղայան, Թումանյան, Իսահակյան և ուրիշներ): Սակայն և՛ իր ժանրային նկարագրով ու արտահայտած գաղափարների բնույթով, և՛ զգացմունքների անմիջականությամբ ու դրանց ներգործման մեծ ուժով «Վերք Հայաստանին» մնաց իբրև մի եզակի ու անկրկնելի երևույթ, որին վիճակված էր դառնալ հայ ժողովրդի ազգային վեպը:

**А. Э. ДЖРБАШЯН — Литературные жанры Хачатура Абовяна.** — В статье рассматривается литературное наследие Х. Абовяна с точки зрения жанрового новаторства. Заложив основу новой армянской литературы, Абовян одновременно своим творчеством предопределил перспективы ее тематического, языкового и жанрового развития. В армянской литературе он стал первым, кто создал и применил жанры рассказа, очерка, стихотворной притчи, назидательной беседы, лирической и сатирической поэмы и, наконец, национально-исторического романа. Ему принадлежат опыты во всех литературных родах и почти во всех жанрах, отличающиеся разнообразием и широтой тематики и художественной формы.